Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

02.12.2021թ. ք. Իջևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Տավուշի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Մ. Բազինյանս ուսումնասիրելով թիվ 05306247 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 27.06.2019թ. տրված թիվ ՏԴ/0207/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Արմինե Ռոբերտի Օթարյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 851 077 ՀՀ դրամ, հաշվեգրվող տոկոսներ, 17 021 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոս, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Պարտապան Արմինե Օթարյանին պատկանող ոսկյա իրերը ներկայացվել են ապրանքագիտական փորձաքննության և <<ՌԱՖՕԼ>> ՍՊԸ-ի կողմից գնահատվել են 858 790 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Արմինե Ռոբերտի Օթարյանին պատկանող, գրավի առարկա հանդիսացող ներքոնշյալ ոսկյա զարդերը՝

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1.	Շղթա, 580 հարգի ոսկուց, օգտագործված, 20.1 գրամ	**315 570 ՀՀ դրամ**	**236 677.5 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**
2.	Շղթա, 580 հարգի ոսկուց, օգտագործված, 20.2 գրամ	**317 140 ՀՀ դրամ**	**237 855 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**
3.	Շղթա, 580 հարգի ոսկուց, օգտագործված, 14.4 գրամ	**226 080 ՀՀ դրամ**	**169 560 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**

Digitally signed by
BAZINYAN
MOVSES
2501750225
Date: 2021.12.21
17:03:31 AMT

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր Կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.achurd.am** կամ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվում՝ «20» հունվար 2022թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:
Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝ Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:
Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:
«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ավագ հարկադիր կատարող՝
արդարադատության մայոր **Մ. Բազինյան**